# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.12.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/50**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի կողմից 14.12.2017թ. ներկայացված բողոքը և «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2017թ. ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/50 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 14.12.2017թ. բողոքով հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն):

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի հավելված թիվ 9-ով ներկայացված տուժանքի մասին հայտարարությանը կից ներկայացված վճարման պահանջագրում նշված գումարը կազմում է 266 000 ՀՀ դրամ, ինչը կազմում է վերջինիս գնային առաջարկի՝ 13 300 000 ՀՀ դրամի 2 տոկոսը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմք վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Վերոգրյալից հետևում է, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված գումարը պետք է կազմեր ոչ թե 266 000 ՀՀ դրամ, այլ 665 000 ՀՀ դրամ՝ վերջինիս գնային առաջարկի 5 տոկոսը:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.1 կետով նախատեսված պահանջները:

Ընկերությունը գտնում է, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը, հետևաբար նաև հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեր Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժվեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է դադարեցնել «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված՝ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.12.2017թ. ժամը 11:20-ի և 25.12.2017թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև 25.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի ժամանակ հայտնել, որ Ընկերության հայտի ապահովումը հիսուն դրամով գերազանցում է գնային առաջարկի հինգ տոկոսը, սակայն դա չի կարող դիտարկվել որպես հայտը մերժելու հիմք, քանի որ Ընկերությունը փաստացի կատարել է հայտի ապահովման հինգ տոկոսի չափը բավարարելու պահանջը:

2. **«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. համանման բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն և «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն:

Կազմակերպությունը ներկայացրել է ցածր գնային առաջարկ և ճանաչվել է հաղթող մասնակից:

Սակայն «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն, համաձայն չլինելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման հետ, 14.12.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

Ընկերությունը խնդրել է, որպեսզի Խորհուրդը դադարեցնի «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված՝ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, քանի որ Կազմակերպությունը տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարը նշել է գնային առաջարկի երկու տոկոսի չափով, որը ըստ Ընկերության, գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտում է:

Կազմակերպությունը հայտնել է, որ եթե «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից գնի առաջարկի երկու տոկոսի չափով հայտի ապահովում ներկայացնելը խախտում է, քանի որ վերոհիշյալ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է լինի գնի հինգ տոկոսի չափով, ապա այս դեպքում «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն ևս թույլ է տվել խախտում, քանի որ տուժանքի մասին համաձայնագրի վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարը նշել է գնային առաջարկի հինգ տոկոսից ավելին, որը նույնպես խախտում է:

Եթե հրավերով հստակ սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է լինի հինգ տոկոս, ոչ ավել, ոչ պակաս, ապա երկու դեպքում էլ հայտն ենթակա է մերժման:

Հրավերի օրինակելի ձևերում սահմանվել է հավելված թիվ 4-ը, գնային առաջարկի ներկայացման օրինակելի ձևը: Նշված օրինակելի ձևերում սահմանվել է, որ մասնակիցը պետք է նշի մասնակցի անվանումը՝ (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը), սակայն «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն չի պահպանել հրավերի հավելված թիվ 4-ով նախատեսված օրինակելի ձևի լրացման կարգը՝ չի նշել ղեկավարի պաշտոնը, անունը և ազգանունը, ինչի պայմաններում, Կազմակերպությունը գտնում է, որ Ընկերության հայտը նույնպես ենթակա է մերժման:

Որպես բողոքի իրավական հիմք, Կազմակերպությունը վկայակոչել է Օրենքի 32-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասերը, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և հրավերի 7.1 կետը, ինչի հիմքով «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի հայտը նույնպես ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 50րդ հոդվածը՝ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն ներկայացրել է համանման բողոք և Խորհրդին խնդրել դադարեցնել «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերի պայմաններին համապատասխանելու և վերջինիս հայտը բավարար գնահատելու մասին «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3.<u>Վանաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Վանաձորի համայնքապետարանը 22.12.2017թ. թիվ 079/10989 գրությամբ հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտն է ներկայացրել երկու մասնակից՝ «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն և «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն, որոնցից «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է 5 տոկոսից ավելի, իսկ

«ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն՝ 2 տոկոսի չափով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, որի համաձայն՝ հայտի ապահովման չափը պետք է լինի առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսը, որից ելնելով, հանձնաժողովը որոշում է կայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին, որը ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.12.2017թ. ժամը 11:20-ի և 25.12.2017թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, 19.12.2017թ. ժամը 11:20-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

**4. ԳԲԽ-ԱՄ-2017/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2017/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԳԵՎՏԱՆԻՔ» և «Մարտուն Անանյան» ՍՊ ընկերությունները:

2. «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 13 300 000 ՀՀ դրամ:

3. «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է տուժանքի մասին համաձայնագիր, որին կից վճարման պահանջագրում հայտի ապահովման չափը նշել է 266 000 ՀՀ դրամ:

4. «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 16 495 090 ՀՀ դրամ:

5. «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ն հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է տուժանքի մասին համաձայնագիր, որին կից վճարման պահանջագրում հայտի ապահովման չափը նշել է 825 000 ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան, իսկ 5-րդ կետով կայացված որոշմամբ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

## 5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի 14.12.2017թ. բողոքը, «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի 20.12.2017թ. համանման բողոքը, Վանաձորի համայնքապետարանի 22.12.2017թ. թիվ 079/10989 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, <u>որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:</u>***

Նույն հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցներից «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 13 300 000 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ Կազմակերպությունը հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում, որի չափը նշել է 266 000 ՀՀ դրամ:

Այսպես, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով ***առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ ***հայտի ապահովման չափը հավասար է ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը, որ կազմում է ***266 000 ՀՀ դրամ, պակաս է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի (13 300 000 ՀՀ դրամ) հինգ տոկոսից***, քանի որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***665 000 ՀՀ դրամ*** (13 300 000*5%=665 000):

Ուստի Խորհուրդը գտնում է, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջը:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընթացակարգին հայտ ներկայացրած մյուս մասնակցի «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահվումը նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է ***16 495 090 ՀՀ դրամ,*** մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման չափը նշվել է ***825 000 ՀՀ դրամ***, որը, Խորհուրդն արձանագրում է, որ գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման հինգ տոկոսի չափը, քանի որ տվյալ դեպքում Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***824 754,5 ՀՀ դրամ*** (16 495 090 *5%=824 754,5):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և

(կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳԵՎՏԱՆԻՔ» և «Մարտուն Անանյան» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում վերջիններիս հայտերը ենթակա էին մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդն գտնում է, որ «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի կողմից 14.12.2017թ. ներկայացված բողոքը և «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2017թ. ներկայացված համանման բողոքը հիմնավոր են և ենթակա են բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 14.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 06.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված՝ «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի կողմից 20.12.2017թ. ներկայացված համանման բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Մարտուն Անանյան» ՍՊԸ-ի հայտը «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանել լինելու և բավարար գնահատելու մասին հանձնաժողովի կողմից կայացված որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**